ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿԳՄՍՆ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Խնդիրների լուծելու կարողության զարգացումը համագործակցային մեթոդով**

Անցկացման վայր՝ **Վարդենիս**

Աշխատանքի Ղեկավար՝ **Հասմիկ Բեյբության**

Ուսուցիչ՝ **Անահիտ Վարդանյան**

դասվար

Դպրոց՝ **Լուսակունք գյուղի միջն դպրոց**

Վարդենիս 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ---------- 5

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ----------9

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1----------14

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2----------21

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------27

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------29

ԴԱՍԻ ՊԼԱՆ-1----------30

ԴԱՍԻ ՊԼԱՆ 2----------31

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակության զարգացման ներկա փուլում կարևոր խնդիր է համակողմանիորեն զարգացած, բարոյական բարձր հատկանիշներով օժտված անհատի ձևավորումը: Այդպիսի անհատի ձևավորման, կրթության և դաստիարակության ուղղությամբ ծավալվող աշխատանքների գործում մեծ է նաև համագործակցային ուսուցման դերը, որը վճռորոշ նշանակություն ունի աշակերտների մտավոր զարգացման և ճիշտ դաստիարակության համար: Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն կիրառվում է որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում, ռազմավարություն: Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, եզրակացությունից, գրականության ցանկից, ունի առանձին մասեր՝ «Համագործակցային ուսուցման կազմակերպումը դպրոցում», «Համագործակցային ուսուցման մեթոդներ» վերնագրերով, որոնք ներկայացված են հաջորդաբար, ունեն կուռ կառուցվածք և ամբողջական պատկերացում են տալիս թեմայի վերաբերյալ::

Աշխատանքի նպատակը: Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն նպատակ ունի համապատասխան մեթոդների կիրառմամբ ուսման գործընթացը վերածել սոցիալական շփման, որի հիմնական իմաստը աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է և խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը: Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

Աշխատանքի խնդիրները: Համագործակցային ուսուցումը խնդիր է դնում բարձրացնել սովորողների ակտիվությունը, ուսուցման գործընթացն դարձնել ավելի ակտիվ ու հետաքրքիր՝նպաստելով խմբերով աշխատելուն: Վերջինիս հիմնական և առաջադիրն խնդիրներն են ուսման գործընթացում պահպանել հետևյալ հիմնական սկզբունքները՝զուգահեռաբար տեղի ունեցող շփումներ, անձնական

պատասխանատվություն, կառուցողական փոխկախվածություն, հավասարաչափ մասնակցություն:

Արդիականությունը և գործնական նշանակությունը: Համագործակցային մեթոդների գործնական կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք ուղղված են սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Համագործակցային մեթոդները իրենց ժամանակակից գործառույթներով մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր և արդիական պահանջներից է: ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են նոր մտածելակերպ, ընկալում, համագործակցային կարողություններ, նոր հմտություններ: Այս պայմաններում կարևոր է կրթության և հանրակրթության դերի վերաիմաստավորումը: Կրթական փոփոխությունների, զարգացման ուղղություններն ու մոտեցումները պահանջում են մանկավարժական գործընթացի կազմակերպման նոր ձևեր և մեթոդներ, դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքնչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում և յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Այդ ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համգործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունը ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը և այլն: Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքր խմբային աշխատանքն է, որի արմատները կարելի է գտնել սոցիոլոգների և ժամանակակից մանկավարժների աշխատանքներում[1]: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Այն ժամանակակիրց կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկն է, որն էլ բնականաբար տարբերվում է ավանդական խմբային աշխատանքի ձևերից, և ոչ մի պարագայում չպետք է ուսուցման գործընթացում կիրառվող խմբային աշխատանքները, նույնացնել համագործակցային ուսուցմանը: Վերջինիս կիրառումը սովորելը ժամանակատար գործընթաց է, և մեկ աշխատանքային հանդիպումը կամ սեմինարը դռևս բավարար չէ: ՈՒսուցիչներից պահանջվում է մեկ կամ երկամյա մասնագիտական վերապատրաստում և ուսուցում: Այդ ժամանակահատվածում չափազանց կարևոր է դասարանում պարբերաբար կիրառել ուսուցման հնտությունները, ուսոմնասիրել համագործակցային ուսուցման վերաբերյալ գրականություն, ինչպես նաև համագործակցել

[1]

նմանատիպ գործընթացներում ներգրավված ուսուցիչների հետ: Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել: Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ): Համագործակցային ուսուցման իմաստն է՝ յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ: Անհատին դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ և համագործակցելու: Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին աշխատել, ապա դա չի նշանակում, որ նրանց մղել ենք արդյունավետ համագործակցության: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում: Շատ են պատահում դեպքեր, երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերը արդյունք չեն ունենում: Առաջադրանքը, մեթոդը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման գործընթացին: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Համագործակցային ուսուցման դեպքում էլ հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը[2]: Ուսուցման հաջողությունը դպրոցում կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում՝ ուսուցման ձևերից, մեթոդներից, դիդակտիկայի մանկավարժական սկզբունքներից: Բոլոր երեխաները չեն կարող սովորել նույն ձևով և նույն կրթական մեթոդով: Այդ պատճառով էլ ուսուցչի ամենակարևոր դերը բոլոր աշակերտների համար այնպիսի բարենպաստ միջավայրի ստեղծումն է, ուր նրանք կկարողանան արտահայտել իրենց ուժեղ կողմերը, սովորել իրենց նախկին փորձից կամ գիտելիքից և դառնալ գիտելիքի ակտիվ մշակողներ: Այս ամենը հնարավոր է իրականացնել համագործակցային ուսուցման ընթացքում: Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմնված և դիտարկման միջոցով իրականացվող ուսումը և այլն): Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ: Հետևաբար, ուսուցիչները կարող են այս կամ այն մեթոդը որդեգրելու

2

փոխարեն ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ: Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար: Համագործակցային ուսուցման լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցման տարրեր

- դրական փոխկախվածության ապահովում.
- դեմ առ դեմ փոխազդեցություն.
- անհատական հաշվետվություն և պատասխանա տվություն.
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ.
- խմբային գործընթացի մշակում.
- փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրան քի կատարում:

1. Դրական փոխկախվածություն: Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումները օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:
2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն: Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն: Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4. Սոցիալական հմտություններ: Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, աշխատանքը կատարելիս ներդրում ունենալը:
5. Խմբային գործընթաց: Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը[3]: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքնչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում և յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Այդ ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համգործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունը ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

3

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Դրանք են՝ Խմբային հետազոտության մեթոդը, «Խճանկար», «Մտագրոհ», ուսուցման «ԽԻԿ» համակարգը, համագործակցային խմբերով գործնական աշխատանքների կատարումը, «Շրջագայություն պատկերասրահում», «Պրիզմա», «Հինգրոպեանոց շարադրանք», «Հասկացությունների քարտեզագրում կամ մտքի քարտեզ» մեթոդական հնար, տարաբնույթ վարժություն-առաջադրանքների կատարում և այլն[4]: Կրտսեր դպրոցում ավելի կիրառելի են՝ «Աշակերտների թիմային առաջադիմություն», «Խճանկար», «Երեք բանալի և մեկ կողպեք», «Հինգրոպեանոց ազատ շարադրանք» մեթոդները և հնարները: Այս մեթոդների հիմքում ընկած է սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործում նրանց ակտիվ մասնակցությունը: Սրանք ուսումնական ակտիվ միջավայր ապահովող ժամանակակից մեթոդներն են, որոնց հիմքում ընկած է կատարողական սկզբունքը: Այս մեթոդները նպաստում են ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացմանը, անհատական և խմբային աշխատանք կատարելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Այս խմբի մեթոդների հիմնական նշանակությունը սովորողների ստեղծագործական մտածողության զարգացումն է, ճանաչողական և գիտական ակտիվության, գիտական որոնման բնագավառում հմտությունների ձևավորումը: Զուգահեռաբար տեղի է ունենում նոր գիտելիքների ձեռքբերում և ամրակայում: Այս մեթոդների հիմքում առավել ընդգծված է ուսուցչի և սովորողների փոխներգործությունը, ինչպես նաև սովորողների համագործակցությունը: Այս խմբի մեթոդներին ավելի հաճախ դիմում են այն ուսուցիչները և սովորողները, որոնք ունեն տարամիտված մտածողություն. արդյունքում ուսուցման խնդիրները լուծվում են ոչ ավանդական եղանակներով:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ

4

թիմի արդյունքում: Իսկ միջին և բարձր առաջադիմությամբ աշակերտները մի կողմից օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդը հնարավորություն է տալիս նաև գնահատելու և՛ առանձին աշակերտներին, և՛ խմբերին:

Խճանկար: Խճանկարը կարող է կիրառվել տարբեր ձևերով: Աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հատվածը՝ կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում ուղղագրական արժեք ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ և այլն: Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ լսելով և շարունակելով միմյանց:

Երեք կողպեք և մեկ բանալի: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Այս մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Ուսուցման ԽԻԿ (խթանում-իմաստի ընկալում-կշռադատում) համակարգը: Խիկ համակարգը համագործակցային ուսումնառությանը և ստեղծագործական մտածողության զարգացմանը նպաստող ռազմավարություն է: Այն իրենից ներկայացնում է ուսուցման և ուսումնառության երեք փուլից բաղկացած մի մոդել: Սա ճանաչողական գործընթացին առնչվող մտածողության մի ընթացք է, ուր աշակերտները պետք է ներգրավվեն նյութը սովորելուց առաջ, սովորելու ընթացքում և սովորելուց հետո: Այս մոդելը համագործակցային մոտեցում է, որի նպատակն է դասավանդման մեջ ներմուծել քննադատական մտածողությունը ձևավորող մեթոդներ: Եռափուլ համակարգի առաջին փուլը խթանման փուլն է: Այս փուլում կատարվում են մի շարք իմացական վարժություններ: Աշակերտներին օգնելով վերհիշելու ունեցած գիտելիքները՝ կայուն հիմք է պատրաստվում նոր գիտելիքները ընդունելու և յուրացնելու համար: Խիկ համակարգի երկրորդ աստիճանը իմաստի ընկալումն է, որը բուն նյութի ընկալման փուլն է: Այս փուլում սովորողը հաղորդակցվում է նոր գաղափարների հետ: Ուսուցիչը այս փուլում նվազագույն ազդեցություն է ունենում գործընթացի վրա: Աշակերտը պետք է կարողանա ինքնուրույն վերահսկել սեփական ընկալումը, նոր գիտելիքները համադրել իր իմացածին: Խիկ համակարգի երրորդ փուլը կշռադատման փուլն

է: Սա ամփոփում է ողջ դասի ընթացքում կատարած բոլոր գործողությունները, եզրահանգումները: Մտագրոհ: Այս մեթոդական հնարը օգտագործվում է աշակերտների նախկին գիտելիքներն ակտիվացնելու նպատակով: Այն գործողությունները, որոնք օգնում են նրանց ակտիվացնելու իմացածը, թեմայի յուրացումը տեղից շարժելու հիանալի միջոցներ են: Մտագրոհի առարկա կարող է դառնալ որևէ հարց՝ կապված թեմայի վերաբերյալ աշակերտների նախագիտելիքների հետ, գծապատկեր, աղյուսակ և այլն: Ծրջագայություն պատկերասրահում: Սա «խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար, ստեղծագործաբար մտածելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Ուսուցիչը ուսումնական նյութը կամ առաջադրանքը բաժանում է 4-6 մասերի և յուրաքանչյուր խմբին տալիս դրանցից մեկը՝ ուսումնասիրելու: Խմբերն աշխատում են տրված մասի վրա և ստեղծում նկար, աղյուսակ, դիագրամ: Պատրաստի աշխատանքները փակցնում են պատերին՝ ստեղծելով «պատկերասրահ»: Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչև 4-ը և կազմում չորս նոր խումբ: Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, և տվյալ խմբի այն անդամը, ով մասնակցել է այդ ցուցանմուշի ստեղծմանը, մանրամասն ներկայացնում է աշխատանքը: Ծրջագայությունը ավարտվում է, երբ խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին:

Համագործակցային ուսուցմամբ դասի պլան

Առարկա՝ Մայրենի

Դասարան՝ Երրորդ

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդման դաս

Դասի թեմա՝ Գոյական անուն

Դասի նպատակները՝

- Ակադեմիական: Խորացնել գիտելիքները առարկա ցույց տվող բառերի վերաբերյալ, իմանալ գոյականի տեսակները, կազմությունը և գրության սկզբունքները, տարբերել անձնանիշ և իրանիշ, հատուկ և հասարակ գոյականները, իմանալ գոյականի եզակի թիվը հոգնակի դարձնելու սկզբունքները:
- Սոցիալական: Երեխաների մեջ ձևավորել համագործակցային (իրար օգնելու, լսելու, խրախուսելու) , ինչպես նաև միջառարկայական կապեր ստեղծելու և խոսքի մեջ բառերը տեղին ու նպատակային կիրառելու կարողություններ:

Դասին առաջադրվող խնդիրները՝

- իմանալ գոյականի սահմանումը, տեսակները և դրանց միջև առկա տարբերությունները
- գիտակցել գոյականի՝ որպես անձ կամ իր արտահայտող խոսքի մաս լինելը
- իմանալ գոյականի եզակի թիվը հոգնակի դարձնելու սկզբունքները և հակառակը

- ❖ իմանալ հատուկ և հասարակ գոյականների ուղղագրությունը և ճիշտ գործածությունը բանավոր և գրավոր խոսքում

Դիտակտիկ պարագաներ՝

- ❖ պաստառներ
- ❖ գծագրեր
- ❖ առարկաներ
- ❖ տետրեր

Մեթոդներ-Զրույց, Մտագրոհ, Հետազոտական աշխատանք, Երեք բանալի և մեկ կողպեք

Դասի ընթացքը

Խթանման փուլ: «Զրույց» մեթոդի կիրառում առարկա ցույց տվող բառերի շուրջ: Այնուհետև առարկա ցույց տվող բառերի թվարկումով «Մտագրոհ» մեթոդի կիրառում:



Ընդհանրացնում ենք՝ «առարկա ցույց տվող բառերը կոչվում են գոյականներ»:

Իմաստի ընկալման փուլ: «Հետազոտական աշխատանք» մեթոդի կիրառում, որի նպատակն է գոյականի տեսակների, թվի և հոլովի ուսուցումը: Դասարանը բաժանում ենք երեք խմբերի և համարակալում խմբերը՝ 1,2,3:

Խումբ 1: Ներկայացնել կենդանական աշխարհը. ի՞նչ կենդանիներ գիտեք, որտե՞ղ են ապրում նրանք, ինչո՞վ են սնվում:

Խումբ 2: Ներկայացնել ծաղիկները. ի՞նչ ծաղիկներ գիտեք, ինչպե՞ս են անվանում նրանց, ո՞ր ծաղիկն եք ամենաշատը սիրում:

Խումբ 3: Ներկայացնել խմբի անդամներին. ովքե՞ր են ձեր խմբի անդամները, ի՞նչ անուններ ունեն նրանք, որտե՞ղ են ապրում, ինչո՞վ են զբաղվում:

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքի արդյունքները: Ուսուցիչը քննարկում է՝ ընդգծելով և շեշտը դնելով հատուկ և հասարակ անունների, եզակի և հոգնակի թվերի վրա: Բոլոր խմբերը խրախուսվում են:

Կշռադատման փուլ: «Երեք բանալի և մեկ կողպեք» մեթոդի կիրառում:

Բանալիներ

- Այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկաներ:
- Այն ամենը, ինչ գոյություն ունի մեր շրջապատում:
- Բոլոր բառերը, որոնք պատասխանում են ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ, ինչե՞ր հարցերին:

Կողպեք-«Գոյական

Ամբողջը ընդհանրացնում ենք և ամփոփում պաստառների ու գծագրերի միջոցով:

Տնային հանձնարարություն: Դասագրքի վարժություններից հանձնարարվում են տնային աշխատանքներ:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1

Գոյականի ուսուցումը: Տարրական դասարանների մայրենիի ծրագրում նախատեսված չէ խոսքի մասերի ամբողջական ուսումնասիրություն: Սակայն կրտսեր դպրոցականները պետք է ձեռք բերեն տարրական գիտելիքներ նաև ձևաբանությունից, որպեսզի բարձր դասարաններում համակարգված քերականության ուսումնասիրման համար անհրաժեշտ հիմք ստեղծվի: Ինչպես ասել է Աբեղյանը՝ «Անշուշտ, աշակերտը իր մայրենի լեզվի ձևերն էլ, այդ ձևերի նշանակությունն էլ հասկանում է առանց քերականության, բայց հասկանում է մի տեսակ բնազդաբար, խառը, անջատ-անջատ, իսկ քերականության ուսուցումը մայրենի լեզվի լեզվական ձևերի ու դրանց նշանակության ըմբռնումը բնազդականից դարձնում է գիտակցական, խառն իմացումից՝ կապակցված, ամբողջական ու ընդհանրացված»[5]: Մայրենի լեզվի գործող դասագրքերի հեղինակները ստեղծել են ընթերցանության և քերականության միասնական այնպիսի դասագրքեր, որը ենթադրում է համապատասխան նյութերի միաձույլ ուսուցում: Այս դեպքում երեխաները քերականական կանոններն ու սահմանումներն անգիր սովորելու փոխարեն լեզվական օրինաչափությունները ինքնուրույնաբար կիրառում են իրենց խոսքում, արդյունքում զարգանում են նրանց մտածողությունը, դատողական ունակությունները, որը և քերականության առջև դրված նպատակն է: Խոսքի մասերի վերաբերյալ ընդհանուր հասկացություն տալու համար որոշվում է, թե բառը ինչի համար կարող է օգտագործվել, ինչ պաշտոն կարող է ունենալ նախադասության մեջ, կառուցողական ինչ բնագավառի մեջ կարող է այն պետք գալ: Բառի՝ խոսքի մաս լինելու հատկությունն այլ կերպ կոչվում է քերականական արժեք, ուստի խոսքի մասերը որոշել նշանակում է բառերի քերականական արժեքը որոշել: Բառի քերականական արժեքը որոշելու համար անհրաժեշտ է գիտենալ բառի քերականական հատկանիշները, այսինքն՝ թե ինչ կատեգորիայի հասկացություններ է արտահայտում, ձևաբանական ինչ հատկանիշներ ունի, շարահյուսական ինչ պաշտոններ կարող է կատարել: Այդ նպատակով նախ բառերը խմբավորվում են ըստ խոսքի մասերի, այսինքն՝ ըստ նրանց արտահայտած հիմնական նշանակության, ապա ուսումնասիրվում են յուրաքանչյուրի ձևաբանական և վերջապես՝ շարահյուսական հատկանիշները: Երրորդ և հատկապես չորրորդ դասարանի դասագրքերն իրենց բովանդակությամբ կարողացել են ապահովել մայրենի լեզվի և ընթերցանության համակցված ուսուցումը՝ օգտագործելով ընթերցանության տեքստերը: Այս

5

դասարաններում անցնում են՝ ուղղագրության, բառերի կազմության, բառիմաստի, բառի ուղիղ և փոխաբերական իմաստների, բառակապակցության ու դարձվածքի կրկնությունը և ուսուցումը: Գոյականի, ածականի, բայի, նրանց ձևափոխությունների (առանց «հոլովում» և «խոնարհում» տերմինները գործածելու) կրկնությունը, թվական անվան, դերանվան ուսուցումը[6]: Տարրական դասարաններում մայրենի լեզվի ուսուցումը իրականացվում է երկու փուլով՝ լեզվական նախագիտելիքների և լեզվական տարրական գիտելիքների ուսուցում: Լեզվական նախագիտելիքների փուլում երեխաները չպետք է սերտեն քերականական կանոններ և սահմանումներ: Խոսքի մասերի հետ այս փուլում ծանոթանում են որպես առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերի: Խոսքի մասերի ուսուցման ժամանակ տրվում են գիտելիքներ այն մասին, թե մեր շուրջը ինչ կա՝ առարկա է, այդ առարկաներով (կամ առարկաները) կարելի է կատարել (կատարում են) որոշակի գործողություն, այդ առարկաները ունեն հատկանիշ և այլն: Հետագա փուլերում աշակերտներն ուսումնասիրում են խոսքի մասերն առանձին-առանձին: Քերականական գիտելիքները պետք է հնարավորինս ծառայեցնել սովորողների խոսքաշինական կարողությունների զարգացմանը, լեզվական ճաշակի մշակմանը: Աշակերտների բառապաշարի հարստացումը՝ որպես խոսքի զարգացման կարևորագույն բաղադրամաս, կատարվում է մայրենի լեզվի դասավանդման ողջ ընթացքում: «Հնչյունաբանություն», «Բառագիտություն» բաժիններից ձեռք բերած գիտելիքների խորացմամբ աշակերտների բառապաշարի հարստացման, խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքը շարունակվում է նաև խոսքի մասերի ուսուցման ժամանակ: Լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրումը նպատակահարմար է իրականացնել հետևյալ հաջորդականությամբ.

1. գոյական,
2. բայ,
3. ածական,
4. թվական,
5. դերանուն,
6. շաղկապ (ընդհանուր ծանոթություն),
7. ձայնարկություն (ընդհանուր ծանոթություն):

Գոյական անուն թեմայի ուսումնասիրումը հենվում է առարկա ցույց տվող բառերի մասին երեխաների ունեցած նախնական գիտելիքների վրա, որոնք նրանք յուրացրել էին դեռևս գրաճանաչության այբբենական շրջանում (ո՞վ, ի՞նչ հարցերի միջոցով նրանք որոշում էին առարկա ցույց տվող բառերը և այդպես էլ անվանում էին): Յուրաքանչյուր դասարանում ուսումնասիրվելիք նյութի ծավալը և բովանդակությունը պայմանավորված են գոյական անվան առանձնահատկություններով, ինչպես նաև կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկություններով: Ուսուցման այս փուլում իրականացվում են՝

6

ա. գոյականի քերականական հասկացության ըմբռնումը,հարցերի օգնությամբ գոյական անունները տարբերելու (նաև անձ և իր ցույց տվող) կարողության տիրապետումը (առանց անուններ տալու), հատուկ անունները մեծատառով գրելու կարողության ձևավորումը (մարդկանց անունները, հայրանունները, ազգանունները, կենդանիներին տրվող անունները, քաղաքներին, գետերին, ծովերին, սարերին տրվող անունները),

բ.հարցերի միջոցով գոյական անունների թիվը որոշելու և այն փոփոխելու կարողությունների զարգացումը,սովորողների բառապաշարի հարստացումը նոր գոյական անուններով,բառերը վերլուծելու, համեմատելու և համակարգելու կարողությունների մշակումը, խոսքում գոյականը՝ ըստ հոլովային նշանակության և համապատասխան վերջավորության ճիշտ գործածելու կարողության ձավորումը:

Վերոհիշյալ խնդիրները լուծվում են համաձույլ՝ յուրաքանչյուրի ուսումնասիրության ժամանակ առավել ուշադրություն դարձնելով, դասարանից դասարան խորացնելով և ընդլայնելով գոյական անվան մասին երեխաների ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները: Գրաճանաչության շրջանում իրականացվում է գոյական անվան հետ ծանոթացումը՝ իբրև առարկաներին տրվող անուն (առարկա ցույց տվող բառ)՝ հիմք ընդունելով ո՞վ, ովքե՞ր կամ ի՞նչ, ինչե՞ր հարցերը: Որպեսզի երեխաներն ըմբռնեն այդ հասկացությունը, նրանց անհրաժեշտ է սովորեցնել դասդասել ըստ նշանակության՝ մշակելով դրանք համեմատելու, հակադրելու, նրանց միջև գոյություն ունեցող նմանություններն ու տարբերություններն տեսնելու ունակություններ: Այս կարողությունների ձևավորման նպատակով անհրաժեշտ է աշակերտներին առաջարկել ո՞վ և ի՞նչ հարցերին պատասխանող բառեր և հանձնարարել դրանք խմբավորել ըստ տրված հարցերի: Այս խնդրի լուծման նպատակով կարելի է անձ և իր ցույց տվող առարկաների նկարների տակ գրել համապատասխան հարցը և աշակերտներին առաջարկել այդ հարցի օգնությամբ պարզաբանել, թե ինչ են տեսնում յուրաքանչյուր նկարում

Ի՞նչ է:

Ի՞նչ է:

Ո՞վ է: **Ո՞վ է:**

Երեխաները պատասխանում են հարցերին և հասկանում, որ ի՞նչ հարցին պատասխանող բառերը ցույց են տալիս իրեր, իսկ ո՞վ հարցին պատասխանող բառերը՝ անձեր: Այս փուլում երեխաները կիմանան, որ առարկա ցույց տվող բառերը կոչվում են գոյական անուն: Առարկա ցույց տվող բառերի և դրանց մեջ մտնող բառերին առաջադրվող հարցերի միջև որոշակի կապ ստեղծելու նպատակով պետք է կատարել բազմաթիվ վարժություններ, որոնց միջոցով երեխաները կհանգեն այն եզրակացության, որ բայը և ածականը անձ և իր ցույց չեն տալիս:

1. «Անտառ» բառի հետ առնչվող բառաշարքից գտի՛ր և դու՛րս գրիր միայն իր ցույց տվող բառը:

2. Ընտրի՛ր՝ որ բառն է իր ցույց տալիս:

- **բանաստեղծ**

- **Վաչե**
- **կենդանի**

3. Որոշիր՝ որ բառերն են պատասխանում ի՞նչ հարցին:

- **աստղ**
- **թագավոր**
- **երեխա**
- **մոլորակ**

4. Ընտրի՛ր՝ որ շարքում կտեղադրես բառը:

1. Սերոբ, նկարիչ, Նարգիզ
2. հորթ, բազկաթոռ, շուշան

5. Որոշի՛ր՝ իր ցույց տվող քանի բառ կա նկարում:

Գաղափար գոյականի եզակի և հոգնակի թվերի մասին: Ուսուցման այս փուլում երեխաները պետք է տարբերեն եզակի և հոգնակի թվով գոյականները թե՛ իմաստով, թե՛ վերջավորությամբ: Մեկի և շատի մասին երեխաները գործնականորեն գիտեն դեռևս նախադպրոցական տարիքից, անհրաժեշտ է այդ գիտելիքին տալ քերականական ձևակերպում և սովորեցնել դրանց եզրույթները: Միաժամանակ երեխաները պետք է սովորեն եզակի թվով դրված գոյականները հոգնակի դարձնել և ընդհակառակը, ինչպես նաև գոյականը ճիշտ գործածել խոսքում: Եզակի թվով դրված մի շարք գոյականներ հոգնակի դարձնելուց և (հակառակը) հետո աշակերտները գալիս են եզրակացության, որ.

- գոյականն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի,
- գոյական անվան եզակի թիվը ցույց է տալիս մեկ առարկա, իսկ հոգնակի թիվը՝ մեկից ավելի նույն տեսակի առարկաներ,
- գոյական անվան եզակի թիվը հոգնակի դարձնելու համար միավանկ բառերի վրա ավելացնում ենք –եր, իսկ բազմավանկ բառերի վրա՝ -ներ մասնիկները[7]:



[7] [illegible] տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015, էջ 230-[illegible]



Վարժությունների կատարման ճանապարհով երեխաների մոտ կամրապնդվեն գոյականի եզակի և հոգնակի թվի մասին ստացած գիտելիքները:

1.Նշի՛ր՝ որ հարցին կարող է պատասխանել տրված պատկերի անվանումը:

- **ինչե՞ր**
- **ովքե՞ր**
- **ի՞նչ**
- **ո՞վ**

2. Բառերը խմբավորի՛ր համապատասխան սյունակներում:

Լեռներ, գետ, աչք, աստղեր, հեռուստացույց, հեքիաթներ, մուկ, թիթեռ, վագր, տետրեր, խոսքեր, հույզեր, խումբ, տուն, պատուհաններ, խաղալիք:

Եզակի թիվ	Հոգնակի թիվ

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2

Գաղափար հատուկ և հասարակ անունների մասին: Երեխաներին պետք է գաղափար տալ նաև գոյական անվան տեսակների՝ հասարակ և հատուկ անունների մասին: Այդ բանն ամենից հեշտ կարելի է անել գոյական անուն անվանման էությունը կամ բառացի նշանակությունը բացատրելու միջոցով: Բացատրում ենք, որ գոյական նշանակում է գոյություն ունեցող, իսկ այն բառը, որը ցույց է տալիս գոյություն ունեցող որևէ բան կոչվում է գոյական անուն կամ գոյականին տրվող անուն, այսինքն՝ գոյականը առարկան է, իսկ գոյական անունը՝ այն բառը, որը ցույց է տալիս առարկա[8]: Ուսուցչի օգնությամբ աշակերտները պետք է հիշեն բոլոր այն բառերը, որոնք սովորել են գրել մեծատառով, ապա դրանք պետք է գրեն գրատախտակին և ասեն նույն խմբին պատկանող այլ անուններ: Նյութի իմաստավորման նպատակով շահեկան է գրել նախ հատուկ անունները, հետո դրանց ընդհանրացնող անունները:

Գայանե, Տաթև, Հռիփսիմե, Անի- աղջիկ

Դավիթ, Տիգրան, Ավետ, Մոնթե- տղա

Մասիս, Արագած, Սիս, Նեմրութ- սար

[8] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 357:

Գորիս, Երևան, Մեղրի, Կապան- քաղաք

Պետք է օգնել, որ երեխաները եզրակացնեն. «Աղջիկ անունը ընդհանուր է բոլոր աղջիկների համար, իսկ Գայանեն տրվում է աղջիկներից մեկին՝ մյուսներից տարբերելու համար. այն հատուկ անուն է»: Երեխաներին բացատրվում է, որ աղջիկ, տղա, սար, քաղաք գոյական անունները ընդհանուր կամ ընդհանրացնող անուններ են:

Տարաբնույթ վարժությունների կատարման ճանապարհով ամրապնդում ենք սովորածը:

1.

2.



3.

4.

Այնուհետև ուսուցիչը երեխաներին պետք է ուղղորդի՝ կշռադատելու.

Գոյական անունները կարող են լինել երկու տեսակ՝ հատուկ և հասարակ:

- Միևնույն տեսակի բոլոր առարկաներին տրվող ընդհանուր անունը հասարակ անուն է և կոչվում է ընդհանրացնող անուն:
- Միևնույն տեսակի առարկաներից մեկին տրվող առանձին անունը կոչվում է հատուկ անուն:
- Գոյականի հասարակ անունը գրվում է փոքրատառով, իսկ հատուկ անունը գրվում է մեծատառով[9]:

Գաղափար գոյական անվան հոլովման մասին: Դեռևս կարդալու նախնական կարողության ձևավորման փուլում աշակերտները գործնականորեն սովորում են, որ բառերը նախադասության մեջ փոփոխություն են կրում: Նյութի ուսումնասիրության ժամանակ աշակերտների ուշադրությունը պետք է հրավիրել նախադասության մեջ բառերի կրած փոփոխության, մասնավորապես, դրանց վերջին տառերի փոփոխման վրա՝ բացատրելով, որ այս փոփոխությունն անհրաժեշտ է, որպեսզի նախադասության կազմի մեջ մտնող բառերի

[9] Գյուլամիրյան Ջ., նշված աշխատությունը, էջ 232:

միջև կապեր ստեղծվեն: Այս երևույթը տպավորելու համար ուսուցիչը աշակերտների հետ գրատախտակին գրում է անձ և իր ցույց տվող երկու գոյական անուն՝ հոլովական բոլոր ձևերով:

Բակ	**Մայրիկ**
1. Մեր **բակը** շատ գեղեցիկ է:	1. **Մայրիկը** սիրված էր բոլորի կողմից:
2. **Բակի** մեջտեղում թթենին էր:	2. **Մայրիկի** ժպիտն ամենագեղեցիկն է:
3. **Բակին** նայելիս ուրախանում եմ:	3. **Մայրիկին** օգնել է անհրաժեշտ:
4. Արայիկը տեսավ մեր **բակը**:	4. Աննան սիրում է իր **մայրիկին**:
5. **Բակից** ձայներ էին լսվում:	5. **Մայրիկից** գումար խնդրեցի:
6. Նա հիանում էր մեր **բակով**:	6. Ես հպարտանում եմ իմ **մայրիկով**:
7. Երեխաները խաղում են **բակում**:	7. **Մայրիկիդ մեջ** շատ քնքշություն կա:

Իմաստավորելու համար ուսուցիչը երեխաներին առաջարկում է դիտել ընդգծված գոյականների վերջավորությունները, առանձնացնել դրանք և բացահայտել, որ վերջավորությունների միջոցով նախադասության բառերը կապվում են միմյանց: «Գոյականի հոլով» հասկացության ձևավորումը տարրական դասարաններում փոքր-ինչ բարդ գործընթաց է, այդ իսկ պատճառով պետք է ընտրել վարժությունների այնպիսի համակարգ, որի միջոցով հասկացության ձևավորումը էլ ավելի հեշտ կլինի:

1.**Լրացրու՛ բաց թողնված բառը:**

Երեխան խաղում է ….
ա) գնդակը
բ) գնդակից
գ) գնդակով

2. **Գրի՛ր տրված բառերի համապատասխան ձևերը**:

Նմուշ՝ օր-օրվա:

Ժամ, շաբաթ, տարի, կեսօր, երեկ, առավոտ, գիշեր, ցերեկ:

Գաղափար գոյականի կազմության մասին: Տարրական դասարաններում մայրենի լեզվի ուսուցման դասաժամերին երեխաներին գաղափար է տրվում նաև գոյականի կազմության մասին: Գոյական անվան շուրջ տարվող վարժությունների մեջ որոշակի տեղ պետք է տալ գոյականակերտ ածանցներով տարվող բառակազմական վարժություններին, որոնք ոչ միայն բառապաշարի հարստացման, այլև գոյական հասկացության ամրապնդման տեսակետից շատ արժեքավոր են: Կարելի է տալ ածանցները և բառերը, որպեսզի դրանցով նոր բառեր կազմվեն (-ակ, -ական, -եղեն, -ող, -ություն, -ունի, -իք և այլն), կարելի է տալ նաև միայն ածանցները, թողնելով, որ երեխաներն իրենք բառեր կազմեն, իսկ ապա բացատրեն,

թե գոյականակերտ ածանցների միջոցով ինչ խոսքի մասից են գոյական անուն ստացել: Առանձնապես օգտակար պետք է համարել ածականից և բայից գոյական անուններ ստանալու վարժությունները (գրել-գրություն, հմուտ-հմտություն, քաջ-քաջություն, ուտել-ուտելիք, խմել-խմելիք, գործել-գործիք): Այսպիսի վարժությունները հնարավորություն կտան խոսքի մասի ճանաչման կամ տարբերակման քերականական-ձևական հատկանիշների մեջ հաշվի առնել նաև ածանցները (հմտություն-ը գոյական է, որովհետև ունի –ություն գոյականակերտ ածանցը):

1.Ընտրի՛ր այն բառերը, որոնք ունեն նույն ածանցը: Դրանք ընտրի՛ր ըստ գույների:



2.Ընդգծի՛ր տրված բառերի արմատները:

Հովիկ, վարդենի, ձնծաղիկ, լրաբեր, մետաքսաթև, տնակ, ժամացույց, խնձորենի, խաղաղություն, աներես, փոքրիկ, աղի:

3.Տրված բառերից առանձնացրո՛ւ ածանցները:

ա) երազկոտ, դասարան, երազանք, գլխավոր, գնդակ, հազարավոր,

բ) վախկոտ, լիություն, անտեր, ընդեղեն, մասրենի, թփուտ, քաջություն,

գ) որսորդ, գրիչ, անլեզու, հեռու, հագուստ, քնքշություն, թզուկ, արջուկ:

4. Բառերը խմբավորել համապատասխան վանդակներում: Ո՞ր բառն է ավելորդ:

Ազատություն, քաղաքական, ոսկեղեն, տանձենի, հայկական, վեհություն, բալենի,լեզվական, զինվոր, բանջարեղեն, բարություն, սովորական, ամանեղեն, կեռասենի:

ություն	ական	եղեն	ենի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով համագործակցային ուսուցման առանձնահատկությունները և շեշտելով դրանց կարևորությունը ՝ հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1.Համագործակցային ուսուցումը դասավանդման համակարգված, կանոնակարգված ռազմավարություն է, որի դեպքում աշակերտները փոքր խմբերով համատեղ աշխատանք են ծավալում ընդհանուր որևէ նպատակի իրագործման կամ լուծման համար: Սա խմբային աշխաըանքի առավել կատարելագործված, բարձր աստիճան է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում: Լինում են դեպքեր, երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերը արդյունք չեն ունենում: Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին աշխատել՝ առանց ուղղորդելու, ապա քիչ է հավանական, որ կստացվի համագործակցային ուսուցում:Այդպիսի ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել որոշակի տարրեր՝ դրական փոխկախվածություն, դեմ առ դեմ փոխազդեցություն, անհատական պատասխանատվություն, սոցիալական հմտություններ, համագործակցային հմտություններ, խմբային գործընթացի մշակում:

2.Համագործակցային ուսուցման մեթոդների հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային կատարումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման և բանավոր խոսքի կարողությունները: 3.Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմնված և դիտարկման միջոցով իրականացվող ուսումը և այլն): Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ

եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ: Սակայն ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն: Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝ դասի տիպից ու կառուցվածքից, ուսումնական նյութի բովանդակությունից, աշակերտների տարիքից, դասարանում աշակերտների թվաքանակից, պատրաստվածության մակարդակից, շահագրգռվածությունից ու հետաքրքրությունից, ուսումնադիտողական պարագաների առկայությունից, ժամաքանակից, ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից:

4. Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման, արժևորման համար, ինչպես նաև բարելավում է խմբային աշխատանքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ափոյան Ա., Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում, http://shsu.am/media/journal/2014n1b/37.pdf(21.11.2021):

2.Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» հրատ., 2015, 316 էջ:

3.Խաչատրյան Ս.,Լեզվական գիտելիքների ուսուցումը տարրական դասարաններում՝ ըստ ծրագրային պահանջի, http://shsu.am/media/journal/2014n1b/34.pdf (21.11.2021):

4.Հարությունյան Ռ., Գոյականի ուսուցման հիմնախնդիրները հիմնական դպրոցում, Երևան, «Ան-Ջոն» հրատ., 2013, 236 էջ:

5.Սահակյան Վ. Ա.Համագործակցային ուսուցման, համագործակցային մեթոդների, հնարների կիրառման արդյունավետ հմտությունների ձևավորումը պատմության դասերին, ԾՊՀ, 2020, էջ 245:

6.Տեր-Գրիգորյան Ա. , Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ., 1980, 564 էջ:

7. hy.m.wikipedia.org (21.11.2021)

8. https://www.imdproc.am/ (21.11.2021)

9. www.itn.am(21.11.2021)

Դասի պլան1

Առարկան- մայրենի	ՈՒՍՈՒՑԻՉ- Ա.Վարդանյան	
Դասարանը- 3	ՈՒՍՏԱՐԻ	ԿԻՍԱՄՅԱԿԸ – երկրորդ
Դասի թեման	‹‹Տերևաթափ››	
Դասի տևողությունը	45 ր	
Դասի տիպը	Համակցված դաս	
Դասի նպատակը	Ի՞նչ կկարողանան անել աշակերտները դասի ավարտին: Կկարողանան վարժ,սահուն ընթերցել դասը,լսել հասկանալ և ճիշտ վերարտադրել հնչող խոսքը: Ձևավորել ընթերցասիրություն,հարգանք գրքի նկատմամբ,ինքնուրույն աշխատանքով իր հետաքրքրությունները բավարարելու ձգտում:	
Վերջնարդյունքները	Վերլուծեն ընթերցած տեքստի բովանդակությունը,ձևակերպեն հարցեր ընթերցածի հիմնական բովանդակության վերաբերյալ,	
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Դասագիրք,հեքիաթի գիրք, քարտեր,նկարներ	
Գնահատում	Ընկալման ստուգում: Ինքնուրույն աշխատանք:	
Դասի փուլերը ● Դասի սկիզբ (5ր) Դասի հարցում 25ր	Ողջույնի խոսքից հետո կատարում եմ աշակերտների հաշվառում: Տնային աշխատանքի ստուգում Հարցերի միջոցով ամփոփում եմ դասը. Աշակերտներին տալիս եմ հարցերը.	

Նոր նյութի հարցում 15ր Ամփոփում(5ր)	Մտագրոհ նախապատրաստական զրույցներով հարցնել նոր նյութը կատարել խմբային աշխատանքներ անել վերլուծություններ
Տնային աշխատանք Առարկան- մայրենի	Գրել շարադրություն <<Աշնան վերջին տերևը>> վերնագրով:

Դասի պլան 2

Առարկան- մայրենի	ՈՒՍՈՒՑԻՉ- Ա.Վարդանյան	
Դասարանը- 3	ՈՒՍՏԱՐԻ	ԿԻՍԱՄՅԱԿԸ – երկրորդ
Դասի թեման	‹‹Տերև››	
Դասի տևողությունը	45 ր	
Դասի տիպը	Համակցված դաս	
Դասի նպատակը	Ի՞նչ կկարողանան անել աշակերտները դասի ավարտին: Հիշե՛ք Բլում-Անդերսոնի աստիճանակարգը: Բառի իմաստային խմբեր.հոմանիշ և հականիշ բառեր:	
Վերջնարդյունքները	Վերլուծեն ընթերցած տեքստի բովանդակությունը,ձևակերպեն հարցեր ընթերցածի հիմնական բովանդակության վերաբերյալ	
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Դասագիրք,հեքիաթի գիրք, քարտեր	
Գնահատում Դասի փուլերը • Դասի սկիզբ (5ր) Դասի հարցում 25ր	Ընկալման ստուգում: Ինքնուրույն աշխատանք:	
	Ողջույնի խոսքից հետո կատարում եմ աշակերտների հաշվառում: Տնային աշխատանքի ստուգում Հարցերի միջոցով ամփոփում եմ դասը. Աշակերտներին տալիս եմ հարցերը.	

Նոր նյութի հարցում 15ր ● Ամփոփում(5ր)	Մտագրոհ նախապատրաստական զրույցներով հարցնել նոր նյութը կատարել խմբային աշխատանքներ անել վերլուծություններ
Տնային աշխատանք Առարկան- մայրենի	Գրել շարադրություն <<Աշնան վերջին տերևը>> վերնագրով: